Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 06

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ հեռակա նիստի

ք. Երևան 19 մայիսի 2021թ.

Ղեկավարվելով ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի մայիսի 17-ի N 16-Լ և 2021 թվականի մայիսի 18-ի N 17-Լ որոշումներով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետը, կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ:

Համաձայն Կառավարման խորհրդի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են՝

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Բացակայում է՝	
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՕՐԱԿԱՐԳ

Հարց

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Հարություն Ղազանչյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Վաղարշակ Ամիրխանյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Հարություն Ղազանչյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ-6, Դեմ-2

2. Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում Վաղարշակ Ամիրխանյանի թեկնածությանը հավանություն տալու վերաբերյալ:

Կողմ-4, Դեմ-4 (Կառավարման խորհրդի նախագահը քվեարկել է կողմ)

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի արտահերթ հեռակա նիստի ընթացքում Կառավարման խորհրդի անդամները ներկայացրել են հետևյալ դիտարկումները.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Գևորգ Բալումյանը դիտարկեց՝

Հարգելի գործընկերներ,

Հաշվի առնելով, որ նիստն անցկացվում է հեռակա քվեարկության միջոցով և խորհրդի անդամները հնարավորություն չունեն օրակարգում ներառված հարցի վերաբերյալ, այսինքն թեկնածուների վերաբերյալ լրացուցիչ քննարկում իրականացնել, հարցեր տալ, պարզաբանումներ և բացատրություններ ստանալ, կարծում եմ միայն ներկայացված տեղեկատվությամբ անհնար է հստակ կարծիք ձևավորել:

Առնվազն զարմանքս եմ արտահայտում այսպիսի կարևոր հարցի մասին այսպիսի ձևաչափով աշխատանքային քննարկում կազմակերպելու վերաբերյալ: Գտնում եմ բազմազբաղությունը չի կարող մեղմացուցիչ կամ արդարացման հանգամանք դիտարկվել: Նախորդ նիստերում խորհրդի անդամների մոտ ձևավորված և արտահայտված կարծիքը մասնագիտական կողմի բարձրացման (ուժեղացման) անհրաժեշտության մասին նույնիսկ անտեսվել է:

Չնայած, որ հարցը վերաբերում է վարչական կարևոր պաշտոնում անձերի նշանակմանը, ելնելով վերը շարադրվածից հարգելի թեկնածուներին քվեարկում եմ դեմ (քվեաթերթիկը կցվում է):

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանը դիտարկեց՝

Հարգելի գործընկերներ

Գտնում եմ, որ սույն նիստի օրակարգի հարցի շուրջ հեռակա կարգով քվեարկության անցկացումը որևէ պարագայում ընդունելի չի կարող լինել, քանի որ տեսչական մարմնի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար ներկայացված թեկնածուների վերաբերյալ հնարավոր չէ լիարժեք կարծիք ձևավորել միայն նրանց կենսագրականների հիման վրա: Տվյալ պարագայում խորհրդի անդամները հնարավորություն չունեն նիստի ընթացքում հարցեր ուղղելու թեկնածուներին, լսելու նրանց դիրքորոշումները ոլորտի խնդիրների վերաբերյալ:

Միաժամանակ, վերահաստատելով խորհրդի նախորդ նիստի ընթացքում իմ կողմից արտահայտված դիրքորոշումները՝ կապված տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում ոլորտին համապատասխան մասնագիտություն և փորձառություն ունեցող անձ նշանակելու անհրաժեշտության հետ, կարծում եմ, որ ներկայացված թեկանուները չեն բավարարում այդ պահանջներին:

Որևէ կերպ նպատակ չունենալով նսեմացնել ներկայացված թեկնածուների արժանիքները, գտնում եմ, որ նրանց կենսագրականների հիման վրա կարող ենք արձանագրել միայն, որ թեկանածուներից Վաղարշակ Ամիրխանյանի աշխատանքային փորձը սահմանափակվում է միայն ավագանու անդամ լինելով (նա չունի նաև ոլորտային կրթություն), իսկ Հարություն Ղազանչյանի փորձը ոլորտային նախարարությունում կազմում է ընդամենը 2 տարի 8 ամիս, ինչը առերևույթ բավարար չէ վերջինիս՝ ոլորտի մասնագետ համարելու համար:

Ավելին, գտնում եմ, որ հենց Տեսչական մարմնի աշխատակազմում կան արժանավոր մասնագետներ, ում թեկնածությունները կարող էին ներկայացվել մարմնի ղեկավարի կողմից, ինչը սակայն չի արվել: Իսկ իմ՝ որպես խորհրդի անդամ, թեկնածուների վերաբերյալ առաջարկներ չներկայացնելը պայմանավորված է հետագայում շահերի բախում չառաջացնելու շարժառիթներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ օրակարգի երկու հարցերի ընդունմանը քվեարկում եմ «դեմ»:

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը դիտարկեց՝

Հարգելի գործընկերներ,

Չնայած նրան, որ նախորդ նիստի ընթացքում հայտնել եմ իմ դիրքորոշումը օրակարգային հարցի վերաբերյալ և առաջարկել եմ հարցը չքվեարկել՝ համակարծիք լինելով խորհրդի անդամների հնչեցրած մտահոգությունների հետ, օրակարգային երկու հարցերին քվեարկում եմ կողմ՝ հաշվի առնելով, որ խորհրդի անդամների կողմից այլընտրանքային թեկնածուներ չեն ներկայացվել, իսկ Տեսչական մարմնի բնականոն աշխատանքների կազմակերպման ապահովման համար ղեկավարի տեղակալների համալրումը այս փուլում չափազանց կարևոր է:

Ինչպես արդեն ասել եմ, ինքս հանդիպել եմ թեկնածուների հետ և ստացել եմ դրական տպավորություն: Կարևորում եմ նաև պարոն Մարտիրոսյանի դիրքորոշումը և համոզվածությունը «իր թեկնածուների» հարցում:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վահե Դանիելյանը դիտարկեց՝

Կառավարման խորհրդի հարգելի անդամներ,

Կարծում եմ, որ տեսչական մարմնի տեղակալի պաշտոնում նշանակվելու համար վերոնշյալ թեկնածուների վերաբերյալ հնարավոր չէ լիարժեք կարծիք ձևավորել միայն նրանց ինքնակենսագրական տվյալների հիման վրա:

Այնուամենայնիվ, վերահաստատելով խորհրդի նախորդ նիստի ընթացքում քննարկվելիք դիրքորոշումները՝ կապված Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում ոլորտին համարժեք մասնագիտություն և փորձառություն ունեցող անձ նշանակելու անհրաժեշտության հետ, կարծում եմ, որ ներկայացված թեկնածուներից Հարություն Ղազանչյանը բավարարում է մասամբ, այդ իսկ պատճառով վերապահումով քվեարկում եմ՝ Կողմ, իսկ երկրորդ թեկնածուն՝ Վաղարշակ Ամիրխանյանը, իմ համոզմամբ չի բավարարում վերոնշյալ պահանջներին, ուստի քվերակում եմ Դեմ:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել են ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____ Ռ. Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ (խորհրդի քարտուղար) _____ Հ. Բարսեղյան